

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
Ի ՓՈՔՐ ԵՒ Ի ՄԵԾ ՀԱՅԱ

ՊՐՈՒԽԱՌ


**Պրուսացւոց քաղաքն անուանի լեալ հնութեամբն անդստին 'ի ժամանակաց անտի Աննիբաղայ և Պրուսիասայ բիւթանացւոց թագաւորի, հզօր և մեծ հանդիսացաւ յաւուրս Միհրդատայ, և ընդ փոփոխել դարուց և ժամանակաց ընդ իշխանութեամբ կայսերաց, մինչեւ եղեւ յետոյ նախաթոռ Օսմանեան թագաւորաց յառաջ քան զառումն բիւզանդիոյ, յամէ 1325 ցամն 1453:**

ԴԻՐՔ ՔԱՂԱՔԻՆ ԵՒ ԶՈՒՐՑՆ ԱՌԱՋՈՒԹԻՒՆ. — Քաղաքս այս գեղեցիկ և վսեմ դրիւքն և բազմապատիկ փոփոխ տեսարանք բնութեան ցանկալի երևեցուցանէ զինքն. և է կառուցեալ 'ի ստորոտս գոտեացն Ողիմպեայ լերին՝ որ 'ի հարաւոյ նորա, անտես 'ի քաղաքէն, և միայն պարք նորին տեսանին 'ի թիկանց քաղաքին աղխաղխեալք 'ի հարաւ կուտէ. և ստորոտք նոցա ուրեք զառ 'ի վայր և ուրեք հրուան զանաձե, և այլուր դաշտաձե և ձորամէջ դրիւքն՝ նոյնպիսի երևեցուցանեն զայլ և այլ թաղա քաղաքին. որք և բաժանին յերիս զիսաւոր մասունս. բուն քաղաքն յաջմէ, և 'ի ձախմէ թաղն սուրդան Մուրատ մահալլէսի. և 'ի միջին տեղող Դղեակն: Երես ողջոյն քաղաքին հայի ընդ հիւսիս և արեելս. և առաջի նորա ընդ արձակ դաշտավայր մշակեալ և զարդարեալ ծառովք և գիւղօրէք 'ի նմա սփիւռ, և 'ի թիկանց նոցա յարեելից կուտէ լեառնն Գաբրիլը տաղը կոչեցեալ: ընդ վրամ տեսարանաց քաղաքին և բնութեան հրաշալիս համարելի է ամբաւ առատու. թիւն ջուրցն՝ որոց անսպառ շտեմարանք են լերինքն. թող զայլ և այլ գետակս և առուս՝ որք ընդ զանազան ձորամէջն քաղաքին հոսին 'ի լերանց անտի վայրապար՝ սակաւուց ոմանց աղօրէից և խաղախորդաց 'ի պէտս. ամենայն թաղք լի են աղբերգք, և յամենայն տան գտանին անհատաբար հոսելով զցայդ և զցերեկ: Բայց յառատութենէ ջուրցն օդ քաղաքին զիջին և թանձր է, և ջուղքն ևս 'ի հասարակի անպիտանք են և ծանր, թէպէտ և բնակիչքն խտիր զնեն ընդ այս և ընդ այն 'ի ջրոցն, զի բազմապատիկ աղբերակունք եննոցա, որպէտ ոմն Եկնիսու, ոմն տէվրէնիկէ, ոմն կիւմիւշ, և աքձալար և գարաք, միւժտի և կեօյտէրէ, ապոշնայր և փունար պաշի, և այլն. սակայն և առ 'ի նոցանէ խոստովանեալ է թէ առհասարակ ծանր և անախորժ են ջուղք քաղաքին. և պատճառ զհանգային մասունս ասեն որովք լի են լերինքն՝ յորոց ջուղքն բիւն. 'ի նոցանէ են և հանգային ջերմ ջրոց բաղանիքն անուանիք: Սակայն առ զուարձալի և վսեմ դրիւք քաղաքին և առ պրանչելի տեսարանօքն՝ թեթև թուի մնասդ, զոնեայ այնոցիկ՝ որոց պայծառ տեսութեամբ ևեթ քաղաքին զբօնուցուն:

ԴՆԵԱԿՆ. Ի նախնի շինուածոց քաղաքին դղեակն ևեթ նշանաւոր է, թէպէտ և մեծաւ մասամբ աւերակ: Եւ է կառուցեալ 'ի վերայ սեպացեալ ապառաժի, որ

1. Երկոտասան ամօք յառաջէ տեղագրութիւնս քան զաշխարհածանոթ ժամէ և խանգարումն քաղաքիս:

( မြန်မာပြည် ရှေ့တော်မြို့၊ ရှေ့လွှာမြို့၊ သီရိလွှာမြို့၊ မြန်မာပြည် )



և ահեղ է բարձրութեամբն՝ ի հիւսիսոյ և յարևմտից . այլ 'ի հարաւոյ հաւասար դաշտավայրին՝ որ ընդ մէջ է այնր կողման և լեռանցն : Արդ պարփառք կրկին կողմանցդ չերեխն այժմ բաց 'ի մասնէն որ առ արևմտեան դրամբն կայ . գուցէ 'ի բընիկ բարձրութիւն կողմանցն վստահացեալ՝ անօդուտ համարեալ են պարսպք ամրացուցանել : Արևմտեան դուռն նորա կոչի Քարշլաւ գարուտուր, այնու զի յարևմտուտս կոյս քաղաքին են հանգային բաղանիքն միով ժամաւ հեռի 'ի նմանէ . հարաւային դուռն կոչի Զրնուան գարուտուր, և արևելեանն եկր գարուտուր որ և կրկին է : Հանդէպ արևմտեան դրանն է արահետ ուղին, որ 'ի թաղէն սուլդան Մուրատոյ հանէ 'ի դղեակն կոյս առ 'ի կողմն հարաւոյ, և յերկուս բաժանի մի զմիով իրը սանդղաձև յապառաժի անդ . ստորինն տանի մինչև ցփայտեայ կամուրջն փոքրիկ ընդ որով անցանէ դետակ մի ընդ ձորամէջն յաջմէ, իսկ 'ի ձախմէ է պարսպաձև ապառաժ դղեկին, ընդ որ առ կամրջաւն ծակ գործեալ է լայն 'ի բնութենէ, բայց անտի և անդր անգնալի է ուղին, և սեպացեալ ապառաժքն հետղիետէ բարձրանան . յորոց վերայ է վերին ուղին, որոյ նոյնպէս 'ի ձախմէ պարսպաձև ապառաժ և ուրեք ուրեք անձաւք 'ի նմա, և յաջմէ վախից ահաւորութիւն, տարեալ հանէ 'ի հարաւային դուռնն : Ի զրանէ աստի ընդ բովանդակ երկայնութիւն հարաւոյ կողմանն՝ կրկնապարիսպ է դղեակն որ և անկործան կայ տակաւին, մանաւանդ նեղքինն, և բազում ուրեք աշտարակք, բայց մեծաւ մասամբ քայլայեալք : Ի վերայ պարսպացդ՝ մանաւանդ նեղքնոյն՝ բազում յոյն արձանադիրք կան որ անարատ և որ խանգարեալ, և ուրեք ևս բարձրագանդակ ծաղկունք 'ի ձեւ զրասանկաց, ևս և նշանկ խաչի . և այդ ամենայն ոչ 'ի պատշաճ տեղւոջ ագուցեալ յորմն, այլ խառնիխուռն, և ոմանկ ևս կողմնակի և այլք զլխիվայր . նմին իրի թուլին այլոց աւերակաց հնագունից մասունք 'ի նորոգութեան դղեկիդ յարմարեալք 'ի նմին :

ԱՐՔՈՒՆԻՑ ՆԱԽՆԻ ԹԱԳԱԽՈՐԱՑ, ԵՒ ՓՈՎՐԱՆՈՅՆ . — Ազքունական ապարանք նախնի թագառացն Օսմանեանց զոր կոչեն իսկի սէրայ, են 'ի նեղքս 'ի դղեկին մօտ առ Քարշլաւ գարուտուր յեղեր ահազին ապառաժին . այլ շման 'ի նմա կերպարանք արքունեաց, կործանեալ իսպառ յանփութութենէ և 'ի հրդեհաց : Եւ զտեղին այժմ ծայր 'ի ծայր անդաստան թթենեաց արարեալ՝ դուզնաքեայ որմովք պատեալ են 'ի հարաւոյ կուսէ . իսկ 'ի հիւսիսոյ բաց է ամեննեին, որպէս և բովանդակ երկայնութիւն զղեկին այզը կողման : Եւ տեղին այն բարձրութեամբն և յառաջկոյս հրուսանդանաձև երկայնութեամբն և ահաւոր վախիսիքն առաջի նորա, և զի ընդարձակ դաշտավայր քաղաքին է 'ի հանդիպոյ և լերինքն արեելից 'ի թեկանց նորա, պանչելի է տեսարանաւ, արժանի արքայավայել ապարանից : Իսկ մնացորդք հնութեանց մասանց ապարանիցդ դոյզն որմովք զատուցեալ կան յաջակողմն նորա . և են այլ և այլ սենեակք գմբեթաւորք, զորս փողերանոյ կոչեն, ամայի մնացեալք և քայլայեալք, և են նոյնպէս 'ի ծայր ապառաժին, համարձակ մուանելի ամենայն ումեք :

ԹՕՓԽԱՆԷ . ԵՒ ԵԿՐ ԿԱԲՈՒՍՈՒ . — Մօտ Եկրգարուսու զրանն կայ թօփխանէ, յաջմէ լսկի-սէրային . և երկուստեք զրանն կիսեղծ բարձրագանդակ կծեայ պատկերք, հեծելոց առիւծու և ընձու ոգորելոց, և երկուստեք արծուեաց զլխիվեր ուղղահայեաց և թեատարած, ողք աղիսակողմամբք ձեացուցեալ յեռեալ են յորմն :

Բարձրագանդակ պատկերքդ գտանին և 'ի վերայ այլոյ դրան որմովք խցելոյ : Արդ զամենայն տարածովթիւն Թօփխանէին յանդաստան փոխեալ են որպէս զլակի-սէրային , բայց ուրեք ուրեք երեխն աւերակք քարագործ շինուածոց : Ի գտղաթան տեղւոյն ուր թնդանօթքն կան , հրաշալի է տեսարան վայրաց և քաղաքին ողջոյն բազմովթեամբ գմբէթաւոր շինուածոց , իջևանից , մզկիթաց և մնիրայից , և պարտիզաց և բարձր բարձր ծառոց : Հանդէպ Թօփխանէի դրանն է մզկիթ մի , և 'ի վերայ քառակուսի բնոյ մնիրային փորեալ է քարն բոլորչի թղաշափ տրամագծիւ . զորմէ աւանդեն եթէ 'ի շինովթեան մզկիթին դրտակ հացինոյնաշափ մեծովթեամբ՝ դանկի միոջ վաճառէր :

Եւր գարուսուց զոր յիշեցաք յառաջագոյն՝ կրկին դուռն է , յորոց մին բոն դղեկին ընդ որ իջանեն 'ի քաղաքն . իսկ միջոց երկուց դրանցդ պարսպօք բարձրացուցեալ . և յաջակողմն առ երկորումբք դրամբքն աշտարակ բարձր : Ի վերայ միոյ 'ի դրանդեաց երկրորդի դրանն կայ խաչ բարձրագանդակ , և առջնթեր փորադրեալ քանի մի բառք յունարէն :<sup>1</sup>


Դվեակն՝ բնակութեամբն և այլ և այլ թաղիւքն թուի քաղաք մի փոքր . թէ . պէտ և հասարակաց շինուածքն մզկիթք և բաղանիք անշուք են որպէս և տունքն . շուկայ կամ վաճառանոց և իջեվան չիք 'ի նմին . իսկ պարտէզք և անդաստանք բազում և մեծամեծ . Մահմէտականք միայն բնակեն 'ի նմա : Ի նախնի շինուածոց՝ անարատ մնացեալ է անդ Տարուշու մնանադրը ասացեալ եկեղեցին , զորմէ ստորև լիցին բանք :

Պրուսացոց քաղաքն թէպէտ և անկանոն ձեռվ փողոցաց և տանցն է անշուք , այլ գեղեցկութեամբ և պէսպիսութեամբ դրիցն 'ի ներքոյ և արտաքոյ , զուարձալի է յոյժ , և տեղիք զբուանաց 'ի նմա ոչ սակաւ . յորս անուանի է Փունարպաշի հանդէպ հարաւային պարսպաց դղեկին , և թէքէրուձ յարեւելս հարաւոյ , որում մօտ են անուանի ծառք շաղանակի , զանազան քէօլք , և գարանքիլի , և որ այլն ևս :


ՄԶԿԻԹՔ ԵՒ ՄԱՀԱՐՉԱՆՔ ԹԱՐԱԽՈՐԱՑ . — Ի հասարակաց շինուածոց քաղաքին հոյակապ է պէկէսքէնն չորեքտասանն գմբէթիւ . մզկիթք ըստ աւուրց տարւոյն ասեն 365 եղեալ 'ի հնումն , նոյնչափ և բաղանիք . այժմ հազիւ մի 'ի չորից է մնացեալ : Անուանիք 'ի մզկիթաց որք և թագաւորաշէնք՝ են , առաջին և մեծագոյն Ռուռամի , զոր շինեալ են երեք թագաւորք Մուրատ , Պայէզիտ և Մէհմէմէտ Առաջինք . թէպէտ և իւրաքանչիւր 'ի դոցանէ մի մի այլ ևս մզկիթս շինեալ են որք յանուն նոցա կոչին , սակայն հոյակապ մեծովթեամբն սա զանցանէ զամենե . քումբք . լայնովթիւն նորա 'ի հիւսիսոյ 'ի հարաւ է 48 մեդր , իսկ երկայնովթիւնն

1. Ի կողմնակի անկիւնաւոր որմն դրանդ 'ի ձախւ մէ յելաննեն արտաքս՝ կայ վէմ փոքր սուլ ինչ 'ի վեր 'ի գետանոյն , և բռամբ չափ փոսացուցեալ . զորմէ ասեն Տաճիկք , Տէվրիչի ուրումն եկեալ ինդրէ 'ի հաւատակցէ իւրմէ հաց և ջուր , և նա տայ . ինդրէ դարձեալ զգեստ , և նա ոչ զանայ . և ապա պատըս . պարան անկողնոյ և իջեվան , և նա տարեալ 'ի տուն իւր հանգուցանէ զնա : Յանուու ապա նմա Տէվրիչն թէ ընդէր արար զամենայն կամս նորա . և նա տակ զի պարտ է բարի առնել այլոց : Յայնժամ Տէվրի


շին կալեալ զձեռանէ առնն տանի առ վէմն այն , և բռամբն Ճ'նեալ և փոսացուցեալ՝ ասէ ցնա . զօր ամենայն եկեալ գոտես 'ի փոսեալ քարիդ ոսկի մի . և նա առնէր այնպէս : Ի բազմանալ ոսկւոյն՝ գողանան գողք . և 'ի բողոքելն առ գատաւորն՝ գտեալ և տան . և հարցեալ թէ ուստի էր նմա ոսկին . պատմէ նոցա . բայց իբրև երթայ վերատին առնուլ զառօրէականն 'ի քարէ անտի , ոչ ևս գտանէ վասն 'ի վեր հանելոյ զգաղցնիսն :



Ա. Մզկիլը Ղազի մինղեար Մուրատ.



Բ. Մզկիլը և Շիրիմ Ղազի մինղեար (Մուրատայ Ա.)



Գ. Օրենսդիր Հիւմիլ կիզիլ բաղադրից.

53. Որ միանգամ՝ ի զնին կայ՝ ի ներքուստ քառակուսի թանձր կամարասեանցն և գմբէթիցն բազմութեան և պայծառ մեծատարած վայրին և անթիւ բազմութեան կանթեղացն և մեծատառ գրուածոցն յորմունս՝ ի զարմանս ըմբոնի . 19 են գրմբէթքն, և 'ի միջին տեղւո՞նց նոցա գմբէթաձև պատուհան 'ի հիւսուածոյ մետաղեայ թելէ առանց ապակւոյ . իսկ 'ի ներքս մղկթին ուղղահայեաց պատուհանիդէ շատրուան մեծատարած և մշտարուխ հանդերձ կճայատակ դաւթիւն զնովաւ :

Տաշուլլու մանասդրը, զոր 'ի վերդ յիշեցաք 'ի դղեկին, եկեղեցի էր Յունաց, և արդ փոխեալ 'ի մահարձան շիրմի սուլդան Օրդանայ որդւոյ Օսմանայ : Կարի բարձրութեամբն անհամեմատ երեխ տարածութեան իւրում . այլ անարատ մնացեալ են ցայսօր ներքոյ և արտաքոյ որմունքն ամենայն . 'ի ներքոյ պատեալ է գունագոյն կճօք, թէպէտ և առ հնութեանն ուրեք ուրեք անկեալ կճիցն՝ կրով նորոգեալ է : Տեղի խորանին կիսաբոլոր, և նոյնաձև աստիճան գործեալ է 'ի նմա չրեքկարգեան . քառակուսի են սիւնքն . և 'ի վերայ միոյ 'ի ձախակողմեան կամարասեանցն որ մօտ է առ խորանն՝ կայ 'ի մթնագոյն քարէ խաչ երկայնաձև ագուցեալ յորմն : Արկղ մի փոքր եղեալ կայ 'ի վերայ արևեմուեան որմոյն մարդաշափ բարձրութեամբ 'ի վեր, յորում ասեն պահի մազ մի 'ի մօրուացն Մահմէտի : Ի հին յիշատակացն Օրդանայ աստ պահէր թմբուկ մի ահեղ մեծութեամբ, որ 'ի ժամանակս հրդեհի այրեցաւ : իսկ գերեզմանկքն որ գրաւեալ ունին զմիջոց եկեղեցւոյն՝ 23 են թուով, յորոց եղեալն 'ի միջին տեղւո՞նց մեծագոյն դազաղաւ և ծածկոցովն և մեծ զլխարկաւ է սուլդան Օրդանին . և 24 աստի և անտի՝ թագաւորազուն սերունդք նորա անծանօթք յանուանէ . իսկ վերջինն որ 'ի ձախմէ խորանին կայ ստորև քան զայլն՝ Հնդկաց թագաւորին է ասեն որ եկեալ էր յօդնութիւն Օրդանայ : Առ արտաքին զրամբն կան երկու սիւնք 'ի սպիտակ կճոյ մնացորդք հին շինուածոյ, հանդերձ զարդարուն վերնախարսխօք, որ արդ փոխանակ ներքնախարսխի եղեալ են : Յարևմտեան կողմն արտաքոյ եկեղեցւոյն 'ի վերայ ամրեալ որմոցն կան նկարէն պատկեր անեղծք :

Մուշտան Օսման հայր Օրդանայ . — Շիրիմ սորա առընթեր է Տաշուլլու մանասդրայ . յատակ նորա փոքր մի խոր, և է ութանկիւնի . առ իւրաքանչիւր անկեամբն կանգնեալ զոյդ նուրբ սեանց, յորոց չորա զոյդ են 'ի սումաք կարմիր քարանց, և չորք յաղօտ սպիտակ կճոյ . նոյնպէս և որմունքն պատեալ են կապոյտ և սպիտակ կճով : Գերեզման Օսմանայ 'ի միջին տեղւո՞նց կայ բարձր քան զերկուստեք եղեալն . զլխարկ նորա բոլորչի սպիտակ փաթութիւ և լայնամեջ : ի ձախմէ նորին դնի Ալայէտտին երէց որդի նորա և վէղիր, մեռեալ 'ի հիճ . 732 . և յաջմէ սուլդան իալրահիմ 'որդի Օրդանայ, մեռեալ 'ի հիճ . 720 . և առ նովաւ կին Օսմանայ . Ասպրճա սուլդան . և այլ ևս 43 'ի սերնդոց նորին անծանօթք յանուանէ : Ի հանդիպակաց անշուք շիրմի որ որմակից է միւսոյն և միջնազրամբ զատուցեալ կան նոյնպէս 47 գերեզմանք թագաւորազանց, ամենկրին անծանօթք յանուանէ :

Ղազի սուլդան Մուրատ Ա. — Մղկիթ սորա է 'ի գիւղն Զէքիրկէ արտաքոյ քաղաքին 'ի բարձրահայեաց վայրի . ճակատ մղկթիս անսովոր ձեռվ այսինքն է կրկնայարկ գաւթիւ և կամարաձև պատուհանօք տարբերի յայլոց . և յերկոսին կողմանս՝ յարևելս և յարևմուտս՝ անտի ուր գմբէթն սկսանի, կարգաւ խցկունս

արարեալ են հանդերձ սրահիւք, բովանդակ քարայէն և կամարակապ, ելանելի ՚ի վեր սանդղօք ողք կան առնթեր դրան մզկթին անտես արտաքրոյ. և արտաքին որմունք խցկանցդ են նոյն որմունք մզկթին. արարեալ են դոքա վասն կարդացողաց՝ ՚ի Մուրատայ. բայց յետ ժամանակաց յանկարգանալ նոցին զեղխութեամբ՝ նզովս կարդացեալ ՚ի վերայ նոցա և բնակարանացն, անտի և այսր անբնակ մնան: Նոյն ինքն Մուրատ հասոյթս կարգեալ էր նոցա և ամենայն բնակչաց գեղջն Զէ-քիրկէի, ուր ոչ ոք հուր վառէր ՚ի տան իւրում, ամենեցուն յիմարէքէ մզկթին կերակրեալ զօրհանապազ. և հասոյթն էր ՚ի հնձոց զիւլորէից բազմաց. որոց ՚ի շինելն բաւական՝ զգերիսն իւր զոր ՚ի միում գեղջ բնակեցոյց՝ վաճառել պա-տուիրեաց, որպէս զի մի խափանեայի հանապազօրեայ կերակուրն. և սովորու-թիւնդ այդ տեսէ մինչև ցայսօր ՚ի Զէքիրկէ, այլ նուազեալ յոյժ ՚ի նախկին առա-տութենէն. ամենայն տուն արդ զօր ամենայն զրտակ մի հացի թոշակ ունի, և յամենայն հինգարաթի առուր փիլավ. իսկ ՚ի բամազանի այլ ևս աւելի: Սե-րունդը գերեացն բնակին արդ ՚ի զիւլն թշադիանու, և ամ ըստ ամէ հատու-ցանեն իմարէթին զսահմանեալ տուրս ՚ի հնձոց իւրեանց:

Հանդէպ մզկթին Մուրատայ է մահարձանն նորա, և գերեզմանն ՚ի միջին տեղ-ւոյ փայտեայ վանդակաւ շրջապատեալ. արտաքրոյ վանդակին ՚ի ձախակողմն կատ-սայ լի ցորենով եղեալ ՚ի վերայ սեան, յորմէ ջերմեռանզն երկրագործք առնուն բուամբ չափ և խառնեն ՚ի սերմանիս իւրեանց զի առատապէս պտղարերեսցեն անդքն. և է կատսայն բոլորչի լայնաբերան, և առ փորովն քանդակագործ զրու-թիւն աաճիկ խոշորատառ արծաթով յեռեալ, այլ առ հնութեանն խանգարեալ: Առ մնարօքն արտաքրոյ վանդակին կայ քարեայ կոթող երկթզաշափ, յոր եկեալ նատին ամուլ կանայք և ամենայն բախտախնդիր, և պահապան շիրմին (թիւր-պէտար) ունելով ՚ի ձեռին զերկաթի փականս սուզան Մուրատայ զոր Մուրատ քիլիտի կոչեն, երկթիզ երկայնութեամբ և անսովոր ձեռվ, (պահեալ յառանձին արկեղ) և մերձեալ առ բաղդախնդիրն երիցս շուրջ ածէ զզլսովն և բանայ յերրոր-դում նուազին. և այնու որպէս թէ յաջողին բաղդք խնդրողին: — Ի զլուխ դա: զաղին եղեալ է զլսարկ նորաշէն և նորաձե. զի բուն զլսարկ նորա պահի յար-կեղ փականացն. և է բոլորչի ցած, սպիտակ փաթութիւ ուռուցեալ, և գագաթն նորա կորնթարդ. ՚ի նմին արկեղ պահի և վերարկու նորա կանաչագոյն, թէ-պէտ և նորոզեալ յետ ժամանակաց, որպէս և փաթոյթ զլսարկին, որպէս վկայեաց և պահապանն ինքնին: Հանդիպակաց զիսոյն առ որմովք զետեղեալ է գահն նորին Մուրատայ հասարակ փայտաշէն քառակուսի, յորմէ և արծաթի զարդքն բարձեալ են: Մորթ ընձենի եղեալ կայ ՚ի վերայ գահուն հնագոյն յոյժ. յորոց վերայ ասեն վճարէր Մուրատ զսովորական աղօթսն: Եւ ՚ի հանդիպակաց որմն կախեալ կայ մասն զրահի շղթայագործ, որ թուի անշուշտ նորին թագաւո-րի, այլ Տաճիկք առասպելեն դաւթի մարդարէի լինել: Յաջակողմն Մուրատայ եղեալ է Մէհէմմէտ չէլէպի որդի սուզան Պայէզիտի Բ. իսկ ՚ի ձախակողմն առ-ընթեր միմեանց որդիի երլարըրմ Պայէզիտայ՝ Մուսա և իսա չէլէպիք, և առըն-թեր նոցա Եափուպ չէլէպի կրսեր որդի Մուրատայ. և յոտս նոցա կին նորին Մու-րատայ և դստերք նորա առ նովաւ: — Անուանի է յոյժ արտաքին գուռնն գաւթի մահարձանին որ է ՚ի վերայ փողոցի, ՚ի պողպատէ, վանդակաձև քանդակագործ

փորուածոյ զարդուք և յեռեալ արծաթի թելիւք . զամանէ ասեն եթէ փոխարէն իցէ միոյ յեւրոպական թագաւորաց առ Մուրատ . որոյ յղեալ էր նմա ընծայ՝ սուսեր մի : Ոմանց յեւրոպացի ճանապարհորդաց կամեցեալ է զնել զվանդակադուռն զայն 80 հազար դահեկանաց , այլ չեն հաւանեալ պահապանքն օտարացուցանել զերեւելի յիշատակն :

Սուշդան Պայագիո Ա Երլտրրըմ որդի Մուրատայ Ա . — Որոյ մզկիթն յարեւելակողմն կայ քաղաքին արտաքոյ ՚ի մեծ և ՚ի գեղեցիկ և ՚ի բարձրագիր դաշտավայրի : Ի հնումն շրջապատ մզկիթն պատեալ էր պարսպաւ , կամ ըստ ասելոյ ոմանց ապարանք մեծատարած կային առ տեղեամն , և աւերակըն երևին ցարդ , և ուրեք ևս կամարաշէն շինուածք քայքայեաք : Ի հարաւային կողմն մզկիթն մնաց աւերակ մեծի և բազմակամար ջրանցից : Հանդէպ մզկիթն ՚ի հիւսիսային կողմն նորա ՚ի ստորև է մահարձան Պայէզիտայ , որոյ գերեզմանն է ՚ի միջին տեղւոյ . ՚ի ձախմէ նորա որդւոյ նորին սուլդան Սիւլէյմանի , և յաջմէ ՚ի ստորև կնոջն , և երկուց որդւոց : Երևելի ինչ չիք ՚ի նմա բաց յերկուց սուրմաք կարմիր սեանց որ կան երկուստեք դրան գաւթի մահարձանին : Քառորդ ժամաւ հեռի ՚ի մզկիթէ աստի յարեւելս կոյս ՚ի վերայ արահետ ճանապարհին է շինուած մեծ զոր յիմարանոց կոչեն , ամայի և աւերակ . կամարաշէն խցկունք երկուստեք , և միջին վայրն անձեղուն , ՚ի ծայր շինուածոցն սենեակ մի մեծ և բարձրագմբէթ : Ի վերայ արտաքին մեծի դրանն կան երկուստեք արծուիք աղիւսակողմամբք ձևացուցեալ ըստ օրինակի դրանն թօփխանէի զոր յիշեցաք ՚ի վերոյ : Բաց յարծուէնշանացդ այլ ինչ նշան հնութեան չերևի յորմունսն :

## Մ Ի Զ Ա Տ Ք

Գ

Ամենայն նշաւոր էակ իր կենաց ընթացքին մէջ գոնէ սև երես մը ունի . այս բացատրութիւն մ' է որով տիսուր պարագայ մը կ'ուզեմ հասկցնել : Էակ մը՝ որչափ ալ երջանկութեան համար ծնած երևնայ , բնութիւնը միշտ անոր անանկ մէկ դէպք մը պահած է , որ աղէկ հասկցնելու համար հարկ է սովորական բացատրութեամբ սև տառերով գրելի ըսենք , ինչպէս որ սովորաբար կ'ըսեն տիսրութեան մը սաստկութիւնը հասկցնելու համար :

Մահը որչափ որ վիլիսովիայաբար հանգիստ ՚ի գործոյ ուղենանք մոտածել , դառն յիշատակ մը զարթուցանելէն չենք կրնար արգելու զինքը : Նիւթը իր կատարելագոյն վիճակին մէջ որոշեալ պայմաններու միջոցով կատարե-

լագոյն կեանք մ'ունի որով է շնչաւոր . և այս որոշեալ պայմաններուն փոքր այլայլութիւնն իսկ՝ կը զգայ որ իր գոյութեանը աղետալի կրնայ ըլլալ . կը զգայ՝ որ իր ներկայ էութիւնը , որ ըստ ինքեան է այն կատարելագոյն վիճակը՝ առ որ հասուցեր է զինքը բնութեան դիտումը , կրնայ կորսնցնել , և իր ցանկալի գոյութիւնը չգոյ կրնայ ըլլալ . կը զգայ և կը խիթայ . վասն զի իր ներկայէն դուրս այլ ապագայ չտեսներ թերեւ , բայց եթէ ոչնչութիւն , որ զինքը նիւթոյն սկզբնական գործունէութեան վիճակը կը հասցնէ : Եւ արդարեայդ ոչնչութիւնը դառն պայման մը կ'ըլլար և դառն քան զդառնութիւն , եթէ բնութիւնը ժխտած չըլլար ստորին էակաց զայն ըմբոնելու կարողութիւնը : Սակայն որչափ ալ այս էակները գոյութեան կամ ոչնչութեան ապագային